ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 4-ին, ժամը 18.00-ին, Վեհարանի պատկերասրահի դահլիճում տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի Ե ժողովը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ:

Ժողովին մասնակցում էին Գերագույն Հոգևոր Խորհրդի հետևյալ անդամները. Տ. Զավեն Արքեպ. Չինչինյան, Տ. Վաչե Արքեպ. Հովսեփյան, Տ. Գյուտ Արքեպ. Նագգաշյան, Տ. Գևորգ Արքեպ. Սերայդարյան, Տ. Ներսես Արքեպ. Պոկապալյան, Տ. Աղան Արքեպ. Պալիոզյան, Տ. Գրիգորիս Արքեպ. Բունիաթյան, Տ. Խաժակ Արքեպ. Պարսամյան, Տ. Ասողիկ Եպս. Արիստակեսյան, Տ. Պարգև Եպս. Մարտիրոսյան, Տ. Գիսակ Եպս. Մուրադյան, Տ. Աբրահամ Վրդ. Մկրտչյան, տիար Հակոբ Փափազյան, պրոֆ. Պիոն Հակոբյան, ժող. նկարիչ, ակադ. Գրիգոր Խանջյան, պրոֆ. Ռաֆայել Պապյան, պրոֆ. Վլադիմիր Բարխուդարյան:

Առողջական վիճակի պատճառով ժողովին չէր մասնակցում Կ. Պոլսի Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին Արքեպս. Գալանճյանը, որի փոխարեն հաջորդ օրը ժողովին մասնակցեց Կ. Պոլսից ժամանած Տ. Շահան Արքեպս. Սվաճյանը: Երուսաղեմի Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկյանը ևս հաջորդ օրը ժամանեց Մայր Աթոռ:

Խմբովին ասված «Տերունական աղոթք»-ից հետո, սկսվեց ԳՀԽ-ի Ե ժողովի Ա նիստը՝ օրակարգում ունենալով հետևյալ հարցերը.

1. Զեկույց Վեհափառ Հայրապետի կողմից Մայր Աթոռի նելքին գործունեության և վանական կյանքի մասին:

2. Նոր թեմերի ստեղծում Հայաստանում:

3. Կրոնական խղճի ազատության մասին օրենքի քննարկում:

4. Հայաստանում քրիստոնեության 1700-ամյակի տոնակատարության նախապատրաստության աշխատանքներ:

5. Սկզբային Եկեղեցու սահմանադրության մշակման հարց:

6. Հարաբերություններ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հետ:

7. Այլական հարցեր:

8. Ամփոփ զեկույց Մայր Աթոռի տնտեսական կացության մասին:

Սպա ժողովականներին Մայր Աթոռում հավաքվելու առթիվ ողջունեց և ժողովի բացման խոսք ասաց Վեհափառ Հայրապետը:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետը նախ նշեց, որ, ի տարբերություն նախորդ ժողովների, այս անգամվա հավաքը կապված է Մյուռոնօրհնության և երջանկահիշատակ Խորեն Կաթողիկոսի աճյունները Ս.

Գայանե վանքից Մայր տաճարի բակ տեղափոխելու հետ: Ապա Վեհափառը բարձր գնահատեց ժողովրդի կապվածությունը Մայր Աթոռին, որ այս երկու պատմական դեպքերի կապակցությամբ տարբեր երկրներից ու Հայաստանից խմբերով Մայր Աթոռ են այցելում:

Անդրադառնալով Մայր Աթոռի գործունեությանն ու վանական կյանքին՝ Վեհափառ Հայրապետն ասաց, որ նոր ձեռնադրություններով համալրվել է Մայր Աթոռի միաբանությունը, նոր շունչ և ընդգրկում է հաղորդվում կրոնական դաստիարակությանը: Վերջինիս առավել և արդյունալից ծավալմանը մեծապես կնպաստի Մայր Աթոռի տպարանի տեխնիկական վերակինումը: Մեծ ծավալի շինարարական աշխատանքներ են կատարվել թե՛ Մայր Աթոռի տարածքում և թե՛ Հայաստանյան նորակազմ ներքին թեմերում:

1700-ամյակի հանդիսություններն ու ծրագրերը հստակեցնելու համար գործադիր մարմինը երեք նիստ է գումարել, ինչպես նաև որպես գործադիր մարմնի ղեկավար Մայր Աթոռ է հրավիրվել Մեսրոպ Արքեպ. Աշճյանը:

Վեհափառ Հայրապետը պատմեց նաև տրված հովվապետական այցելությունների և միջեկեղեցական հանդիպումների մասին:

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Սկզբային Ժողովի մշակույթի և կրթության հանձնաժողովի նախագահ Ռաֆայել Պապայանը ներկայացրեց խղճի ազատության մասին գործող օրենքը և նրանում Սկզբային Ժողովի կողմից փոփոխություններ կատարելու նախագիծը: Այս հարցի շուրջը ծավալված քննարկումն ամփոփելով՝ Վեհափառ Տերն ասաց, որ կստեղծի համապատասխան հանձնախումբ, որն այլ երկրներում գործող օրենքների ուսումնասիրմամբ և հաշվառմամբ Սկզբային Ժողովում օրինագծի քննարկմանը կներկայացնի Եկեղեցու առաջարկությունները:

Միաժամանակ բոլոր ժողովականների կողմից պրն. Պապայանի ներկայացրած բարեփոխությունները նկատվեցին դրական նոր քայլ՝ պետություն-Եկեղեցի հարաբերություններում:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ 1700-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ

Այս հարցի վերաբերյալ Վեհափառ Հայրապետը նշեց չորս հիմնական բնագավառ, ուր աշխատանքներ պիտի տարվեն.

1. Եկեղեցիների վերականգնում
2. Ուխտագնացություններ
3. Հրատարակչություններ
4. Երևանի Մայր տաճարի կառուցում:

1. Պատմական եկեղեցիների վերականգնման համար պետական հանձնախմբերի կողմից նախատեսվել էր 40 եկեղեցի: Հանդիպում եղավ այդ հանձնախմբի ու թեմական առաջնորդների հետ, քննվեց և ճշտվեց վերականգնվող եկեղեցիների ցանկը, շուտով կսկսվեն նորոգությունները:



2. 1700-ամյակի առթիվ նոր հրատարակություններ պետք է արվեն. ինչպես որ այլ Եկեղեցիների պատմությունն ու հոգևոր ժառանգությունը և մշակույթը նման առիթներով հրատարակությունների միջոցով ներկայացվում են ինչպես իրենց ժողովրդին, այնպես էլ աշխարհում:

3. Թեմերում ևս պետք է կազմվեն հանձնախմբեր՝ ուխտագնացությունները կազմակերպելու համար:

4. Երևանի Տաճարի կառուցումը պետք է անմիջապես սկսել, քանզի Մանուկյան գերդաստանը հոգաց ծախսերը, սակայն ժողովուրդը ևս պիտի մասնակցի, որովհետև պահանջվող գումարը կարող է 10-11 միլիոն դոլլարի հասնել:

Պարոնայք Փափազյանը, Խանջյանը և Շահան Սրբազանը առաջարկեցին ուխտագնացություն կազմակերպել Թադեի վանք, ուշադրություն դարձնել Խոր Վիրապի շրջակայքի բարեկարգմանը և արտասահմանում ևս հանձնախումբ կազմել՝ Երևանի Տաճարի շինության համար հանգանակություններ անելու:

Այնուհետև քննարկվեցին Ազգային Եկեղեցու սահմանադրության մշակման, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հետ հարաբերությունների և Մայր Աթոռի տնտեսական կացությանը վերաբերող հարցերը:

Սեպտեմբերի 5-ի երեկոյան ժամը 18-ին խմբովին ասված աղոթքով ավարտվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի Ե ժողովը: